# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

-116-
19.04.2019 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու թիվ 06 , 07-Ա և համայնքի ղեկավարի թիվ 15 , 16 որոշումները ։
Առդիր ՝ 4 թերթ ։

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք,հասցե՝ 1-ին փողոց,31/1
Հեռախոս՝0255-6-06-04,էլ.փոստ՝.lori.gogaran@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«12 » Ապրիլի 2019 թվականի N 06

## ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով , Գոգարան համայնքի ավագանին

Որոշում է.

Հավանություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաղորդմանը :

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ Գոգարան,
հեռ.0255 6 06 04 էլ. փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 12» Ապրիլի 2019 թվական, 07–Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ | | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | | | |
| ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ | | | |
| ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ | | | |
| ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու
2019 թվականի Ապրիլի 12- ի N 07-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Ղազարյան Անուշ Շահենի– 50.0 հազար դրամ / ուսման վարձ /
2.Գրիգորյան Իրինա Կարենի-50.0 հազար դրամ / ուսման վարձ /
3.Գրիգորյան Ապրես Սարիբեկի- 50.0 հազար դրամ / ուսման վարձ /
4.Յասաբեկյան Ֆրիդիկ Հունանի – 50.0 հազար դրամ / սոց. օգնություն /
5.Հալաջյան Ամալյա Երեմի – 50.0 հազար դրամ / սոց. օգնություն /
6.Գասպարյան Մերի Մանուկի– 30.0 հազար դրամ / սոց. օգնություն /
7.Այվազյան Թերեզա Արտավազդի – 20.0 հազար դրամ / սոց. օգնություն /
8.Ալեքսանյան Ելենա Սարգսի – 20.0 հազար դրամ / սոց. օգնություն /

Գոգարան համայնքի ղեկավար ՝ ---------------------- Արթուր Գալոյան
(ստորագրություն ) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնք,
գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » Ապրիլի 2019 թվականի N15

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ս. Գասպարյանի 2019 թ. ապրիլի 12 –ի հայտը , ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով , 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թ . հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով՝

Որոշեցի .

1.Գոգարան համայնքի 1-ին փողոց , թիվ 14 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Ս. Գասպարյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ /ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն , 2019 թվականի ժամանակահատվածի համար:

2.Եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

2019 թ. Ապրիլի 12

գ.Գոգարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք , գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16
« 17» Ապրիլի 2019 թ .

06-030-0033-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ , հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության / օգտագործման / իրավունքի գրանցման թիվ 1437671 վկայականը և Սուսաննա Սահակյանի դիմումը՝

*որոշում եմ.*

1.Ս. Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գոգարան համայնքի 7-րդ փողոցի վրա գտնվող 06-030-0033-0004 կադաստրային ծածկագրով 0.183 հա մակերեսով տնամերձ հողամասին , դրա վրա գտնվող 06-030-0033-0004-001 կադաստրային ծածկագրով 76.4 քառ. մ մակերեսով տանը տրամադրել « գ. Գոգարան , 7-րդ փողոց , թիվ 6 » հասցեն :
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ